



Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ո Ւ Մ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ԳԻՏԱԿԱՆ ՍՆՍԻԱ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի սեսիան տեղի ունեցավ վերջերս՝ նվիրված 1959 թվականի գիտական արշավախմբերի ձեռք բերած արդյունքների ամփոփմանը:

Սեսիան բացեց ակադեմիկոս Ա. Կարինյանը: Զեկուցումներ լսվեցին հնագիտության, ազգագրության, վիճակագրության և այլ հարցերի վերաբերյալ:

Պատմական գիտությունների Թեկնածու Ս. Սարգսյանի «Ենթադիրքի պեղումները» զեկուցումը լրջվեց մեծ հետաքրքրությամբ: Նա հատկապես նշեց, որ Ենթադիրքը նեոլիթի դարաշրջանին պատկանող առաջին բնակատեղին է Հայաստանում և նստակյաց կյանքի անցած մարդու ամենահին բնակավայրերից մեկը: Սովետական Միությունում Ենթադիրքում պեղումներ կատարելիս հայտնաբերվել են նյութական կուտուրայի շորս շերտեր, ստորինը՝ ուշ նեոլիթ (Դ հազարամյակ մ. թ. ա.), վերին երեք շերտերը՝ Գ-Բ հազարամյակներ մ. թ. ա.: Դա նշանակում է, որ Ենթադիրքը, ինչպես նաև Նրեանը շուրջ 6000 տարվա բնակավայր են եղել:

Ուշագրավ էր նաև պատմական գիտությունների թեկնածու Գ. Վարդումյանի զեկուցումը՝ Նոր-Նախիչևանի գիտական կոմպլեքսային արշավախմբի ազգագրական աշխատանքներին նվիրված:

Ենորհակալ աշխատանք էր կատարել բանասիրական գիտությունների թեկնածու Պ. Հակոբյանը՝ «Նոր նյութեր և Արտյանի մասին» զեկուցմամբ: «1959 թվականին, — պատմում է զեկուցողը, — ես եղա Հայաստանի, Լենինգրադի, Կիևի, Տարուսի արխիվներում և հայտնաբերեցի բազմաթիվ արժեքավոր նյութեր հայ մեծ լուսավորչի կյանքի ու գործունեության մասին»:

Բովանդակվից էր նաև ճարտարապետության թեկնածու Ա. Սահյանի զեկուցումը Ս. Էմիլիանի-Մայր Տաճարի պեղումների մասին:

Բովանդակվից զեկուցումներով հանդես եկան պատմական գիտությունների դոկտորներ Բ. Առաքելյանը (Գառնիի պեղումները), Կ. Ղաֆազարյանը (Դվինի պեղումները), պատմական գիտությունների թեկ-

նածուներ Ս. Բարխուդարյանը (Վիճաբակի արշավախմբի աշխատանքները) և Հ. Մնացականյանը (Լճաշենի պեղումները):

ՆԿԱՐԻՉ ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԸ ԳՆԱՀԱՏՎԱԾ.— ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության մարտի 11-ի հրամանագրով կերպարվեստի բնագավառում մատուցած աչքի ընկնող ծառայությունների համար սովետահայ նկարիչ Մարտիրոս Սարյանին շնորհվեց ՍՍՌՄ Ժողովրդական նկարչի կոչում:

Փետրվարի 28-ին լրացավ մեծ արվեստագետի 80 տարին:

Սարյանի արվեստը, լինելով գերազանցապես հայկական իր շնչով ու հոգիով, գույնով ու տխարալից, մարդով ու տարազով, նույն ժամանակ համաշխարհային մասշտաբով արվեստ է, հարագատ աշխարհի բոլոր ժողովուրդներին: Նրա նկարչության «հայկական լեզուն» մոտ է ու հասկանալի բոլոր ժողովուրդներին, դրանով իսկ այն ցատկարում է տարբեր ազգերի միլիոնավոր մարդկանց:

ՆՐԱՆԻ-ՕՏՅԱՆԻ ՆՐԿԵՐԸ ՎՃՃ ՀԱՏՈՐՈՎ.— Նրվանգ Օսյանը մեր մեծ երգիծարաններից մեկն է: Բնիկն է եղել նրա հրերը, լրագրական հայրենի հողմից սկսվել միջին ֆելիետոնը, պամֆլետ, սյուսմվածք, վեպ ու վիպակ: ԺԺ դարի վերջի և Ի դարի սկզբի հայ կյանքը իր բոլոր կողմերով արտացոլվում է Ն. Օսյանի երկերում:

Վեց հատորների մեջ ընդգրկվելու է Օսյանի ստեղծագործության համարյա ամբողջ վաստակը, ինչպիսիք են՝ «Միջնորդ տերպապան», «Պրոպագանդիստը», «Ազգային բարեխաղ», «Սա դրուցի շնի առններ», «Պատերազմ և խաղաղություն», «Միքիլի սիրելի կաթը», «Վաճառականի մը նամակները», «Նոր հարցադրանքներ», «Կավի հերոսները», «Արդու Համիդ և Շերիկ Հոլմա», «Սալիհա հանըմ», «12 տարի Պոլսի դուրս», «Գրական հիշատակներ», «16 տարի հսր», ինչպես նաև մի շարք վիպակներ ու վեպեր, երգիծական պատմվածքներ, կոմեդիաներ և այլն:

Այս ցանկում ընդգրկված երկերի մեծ մասը առաջին անգամ է լույս տեսնում Սովետական Հայաս-

ասանում: Առաջին հատորը նախատեսված է 1960 թվականի երկրորդ բառարանի համար, վեցերորդը՝ 1962 թվականին:

ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՑԱՆԻ ԾՆԵԴՅԱՆ 80-ԱՐՑԱԿԸ.— Փետրվարի 26-ին Ալ. Սպենդարյանի անվան Լենինի շրանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում նշվեց հայ ականավոր կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի ծննդյան 80-ամյակը:

Հանդիսավոր երեկոյին մասնակցում էին հարյուրավոր գրողներ, նկարիչներ, կոմպոզիտորներ, արտիստներ, ծառայողներ և ուսանողներ:

Երեկոն բացում է ռեսպուբլիկական հրեկյանական հանձնաժողովի նախագահ, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահի տեղակալ Լ. Ստեփանյանը:

Ականավոր կոմպոզիտորի կյանքի և ստեղծագործության մասին ղեկավարում է Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրի տեղակալ, արվեստի վաստակավոր գործիչ Ս. Գասարյանը:

Ա. Տիգրանյանը սովետահայ կոմպոզիտորների ավագ սերնդի ամենապայծառ և տաղանդավոր ներկայացուցիչներից մեկն է,— ասում է նա,— նրա անունը ու ստեղծագործությունը վաղուց հայտնի են ոչ միայն մեր երկրում, այլ նաև նրա սահմաններից դուրս: Մեծ են նրա ծառայությունները հայ երաժշտական կուլտուրայի պատմության մեջ: Նա ստեղծել է մեր ազգային առաջին օպերան՝ «Անուշ»-ը:

Ա. Տիգրանյանի գրելին են պատկանում մեծաթիվ վոկալ և գործիքային ստեղծագործություններ, դաշնամուրային պիեսներ, կանտատաներ, ռոմանսներ և երգեր: Նա իր կյանքի վերջին շրջանին գրեց իր երկրորդ օպերան՝ «Դավիթ Բեկ»-ը:

Հայաստանի Սովետական կոմպոզիտորների միության, Ալ. Սպենդարյանի անվան օպերային թատրոնի կոլեկտիվի և մայրաքաղաքի երաժշտասեր հասարակայնության անունից հանգես եկավ արվեստի վաստակավոր գործիչ կոմպոզիտոր Կ. Զաքարյանը:

Թբիլիսիի կոմպոզիտորների պատվիրակ, Կրաքա-կան և Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ Ս. Բարխուդարյանը պատմեց Ա. Տիգրանյանի կյանքի վերջին տարիների մասին, որոնք անց կացան Թբիլիսիում, «Դավիթ Բեկ» օպերան գրելիս:

Երեկոն ավարտվեց մեծ համերգով, ծրագրում միայն Ա. Տիգրանյանի ստեղծագործություններից:

Այս առթիվ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը որոշել է նրեկանում կանգնեցնել կոմպոզիտորի արձանը, իսկ իր ծննդավայր Լենինականում՝ Կրասնոդարին, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում սահմանել Ա. Տիգրանյանի անվան երկու ուսանողական թոշակ՝ յուրաքանչյուրը 400-ական ռուբլի և հրատարակչության պատրաստել կոմպոզիտորի ընտիր ստեղծագործությունները, ինչպես նաև նրա օպերաների բեմադրություններին նվիրված գեղարվեստական ալբոմ:

Բ. ՄԵԼԻՔ-ՄՈՒՍՅԱՆԻ ՄԱՂԸ.— Փետրվարի 26-ին 67-ամյա հասակում վախճանվեց բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Բարգևի Մկրտչի Մելիք-

Մուսյանը, որը մեր աչքառու գիտնականներից մեկն էր, սրպես աչքի հիվանդությունների մասնագետ:

1933 թվականին Մելիք-Մուսյանը նշանակվում է Երևանի բժշկական ինստիտուտի աչքի հիվանդությունների ամբիոնի ասիստենտ: Ետևում նա ստանում է դոցենտի կոչում և նշանակվում ամբիոնի վարիչ (1935 թ.), պաշտոն, որը վարում է մինչև իր մահը: 1949 թվականին պաշտպանում է դոկտորական գիտությունների թեկնածուական թեզը: Նաև պրոֆեսորի գիտական կոչում:

Իրեկ բժշկական ինստիտուտի ակնառու դասախոսներից մեկը, նա երկարամյա մանկավարժական գործունեության ընթացքում պատրաստել է բազմաթիվ ակնաբույժ մասնագետներ: Իր գրքին են պատկանում բազմաթիվ տպագրված գիտական աշխատություններ: Նա Հայկական ՍՍՌ ակնաբույժների ընկերության հիմնադիր նախագահն էր մինչև իր մահը: 1944 թվականին նրան շնորհվել էր վաստակավոր բժշկի բարձր կոչումը: Նա ոչ միայն հիանալի մանկավարժ էր, այլ նաև լուրջ գիտական աշխատող, զգալուն և նվիրված բժիշկ:

ՖԵՐԴԻՆԻԿ ԵՈՊԵՆԻՆ ՆՎԻՐՎԱՄ ԵՐԵՎԱՆ.— Վերջերս հայ երաժշտասեր հասարակայնությունը մեծ հանդիսավորությամբ և ջերմ սիրով նշեց լեհ հանճարեղ և անմահ կոմպոզիտոր Ֆերդինանդ Եոպենի ծննդյան 750-ամյակը:

Փետրվարի 26-ին, Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում, տեղի ունեցավ երեկո:

Եոպենի կյանքի և գործունեության մասին ղեկավարում էր երաժշտագետ Մ. Տեր-Սիմոնյանը: Տրվեց համերգ, որի ընթացքում Եոպենի ստեղծագործությունների կատարումով հանգես եկան Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը, ինչպես նաև ՌԱՅՄՌ արվեստի վաստակավոր գործիչ պրոֆեսոր Յակով Ֆլիերը:

ԱԼ. ՄՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՈՐՏԻ 30 ՏԱՐԻՆ.— Երևանի առաջին երաժշտական դպրոցը՝ Ալ. Սպենդարյանի անվան, բացվել է որպես քառամյա մի դպրոց և նպատակ է ունեցել պատրաստել պրոֆեսիոնալ երաժիշտներ, այդ իսկ նկատմամբ էլ սկզբնական շրջանում այն կոչվել է «Պրոֆեսորաշտական»: Այդ շրջանին նա ուներ միայն երեք դասարան (ջութակ, թավջութակ և դաշնամուր), ընդգրկելով 282 աշակերտ: Առաջին շրջանավարտները դուրս եկան 1935 թվականին, ստեղծելով շատ մեծ խանդավառություն, ներշնչելով մեծամեծ հույսեր: Իժուր չանցան այդ բոլորը: Ետևում դպրոցը տեղափոխվեց նոր շենքում և վերածվեց յոթնամյակի, ավելացան նաև գործիքները, բացվեց արևելյան գործիքների դասարան:

Այդ դպրոցից դուրս են եկել բազմաթիվ մեծատաղանդ երաժիշտներ, արվեստագետներ, մանկավարժներ և այլն, ինչպես Ա. Բաբաջանյանը, Ալ. Հարությունյանը, Էդ. Միրզոյանը, Մ. Բրուսյանը և շատ ուրիշներ:

Առջինից այս դպրոցի կողքին այսօր բարձրացել են տասնյակ ուրիշ երաժշտական դպրոցներ, որոն-

ցում սովորում են հազարավոր պատանիներ և աղջիկներ, ապագայի մեր երաժշտության ոսկյա ֆոնդի լավագույն պահպանողներն ու շարունակողները:

ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱՆ ԵՐԵՎԱՆ.— Լրացավ արևելահայ նշանավոր նկարիչ Վարդգես Սուրենյանի ծննդյան 100 տարին: Այդ առթիվ Արվեստի աշխատողների տանը կազմակերպվեց երեկո, որին ներկա էին նկարիչներ, արվեստագետներ, ուսանողներ և երևանյան արվեստասեր հասարակայնության այլևայլ ներկայացուցիչներ:

Բացման խոսքը ասաց Հայկական ՍՍԻ Ժողովրդական նկարիչ, ՍՍԻՄ Գեղարվեստական ակադեմիայի իսկական անդամ, պրոֆեսոր Արա Սարգսյանը: Իր խոսքում պրոֆեսորը Վ. Սուրենյանին բնութագրեց որպես մեծատաղանդ նկարիչ, արվեստի տեսարանի, թարգմանի, գրողի և ճարտարապետի:

«Վարդգես Սուրենյանի կյանքն ու ստեղծագործությունը» թեմայով զեկուցեց Արվեստի ինստիտուտի կրտսեր գիտական աշխատող Մ. Ղազարյանը, որն իր զեկուցման մեջ ներկայացրեց Վ. Սուրենյանին որպես Մոսկվայի և Պետերբուրգի թատրոնների նկարիչ, գեղարվեստական գրքերի նկարազարդողի և մանավանդ որպես մեկը Ժ. Դարի վերջի և Ի. Դարի սկզբի այն նկարիչներից, որոնք ստեղծեցին և զարգացրին մեր դասական նկարչությունը:

Երեկոն փակվեց ճոխ համերգով:

ԱՊԱԿՅԱ ԹԵԼԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐԵՐԻՑ.— Հայկական ՍՍԻ Ժողովրդական տեսնություն խորհրդի Քիմիայի ինստիտուտում Հայաստանի քարատեսակներից ստացել են ապակեթելեր: Այս արժեքավոր հայտնագործության հեղինակն է անվանի քիմիկոս Մ. Մանվելյանը: Հեղինակը վերջերս զեկուցում կարգաց Հայաստանի քարերից ապակյա թել ստանալու մասին: Մ. Մանվելյանը իր հետաքրքիր զեկուցման մեջ պատմեց Քիմիայի ինստիտուտում կատարված այն վիթխարի աշխատանքների մասին, որոնց շնորհիվ Հայաստանում գոյություն ունեցող քարերից ստացվել են տարբեր երանգի ու գույնի ապակյա թելեր: Այդ թելերը երկու անգամ ավելի թեթև են ալյումինից, իրենց ամրությամբ շին զիջում երկաթին, բոլոր պայմաններում միշտ պահպանում են իրենց գույնը, չեն վախենում ջերմությունից:

Այդ թելերից կարելի է ստանալ մոտ չորս հազար անուն իրեր: Փառից ստացված այդ թելերը շուտով կօգտագործվեն մեքենաշինության, էլեկտրարդյունաբերության մեջ, փոխարինելով մի շարք թանկարժեք և կարևոր շինանյութերի, որի շնորհիվ հսկայական քանակությամբ գոնավոր մետաղ կխնայվի:

Անվանի քիմիկոս Մ. Մանվելյանի ջանքերով ստացված ապակյա թելերի այդ նոր տեսակները ամենուրեք արժանացել են բարձր գնահատանքի: Շատ շուտով Հայաստանի տարբեր վայրերում կկառուցվեն մի շարք ձեռնարկություններ, որոնք կսկսեն քարից ստացվող ապակյա թելերի մասսայական թողարկումը:

